




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

23208/1

ԱԳՐԱԿՈՄԻՏԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԱԳԻՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԼ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

1932 ԹՎԻ
ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՎԵՐԱԿՆՔՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

(ՆՅՈՒԹԵՐ ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

331.11

Հ - 14



ԲՈՍԱՐՈՒԿՈՒԹՅՈՒՆ ԱԳՐՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԻ

ԲԱԳՈՒ—1932 Թ.

331.11
2-14

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

աթ

1932 թ. կոլեկտիվ պայմանագրերի կնքման կամպանիան տնցնում է միջազգային լարված զրույթյան պայմաններում: Տնտեսական ճգնաժամի ու վրեժգութի դաժան հարվածների տակ, կապիտալիստական աշխարհը ճգնաժամից դուրս գալու յեղք է փնտրում համաշխարհային նոր սպանդանոցի և, առաջին հերթին, Խորհրդային Միության վրա դիմելով հարձակում գործելու մեջ:

Յապոնիայի կողմից Մանջուրիայի բռնազբաղումը և Չինաստանի կարենադույն տնտեսական և քաղաքական կենտրոնների գրավումը—դա փաստորեն իմպերիալիստական նոր պատերազմի սկիզբն է՝ իմպերիալիզմի և ինտերնացիոնալի ավազակային բնի—Ազգերի Լիգայի ու «գրնաթափման» մասին պացիֆիստական խաբուսիկ ֆրազների ծածկոցների տակ:

1932 թ. կոլեկտիվ պայմանագրերի կնքելու կամպանիան պետք է մարիլիդացիայի յենթարկի պրոլետարական մասսաների ամբողջ կամքն ու յեռանդը՝ պայքարելու հնգամյակի ավարտական տարվա պլանի կատարման և գերակատարման համար և, հենց զրանով ել յերկրի պաշտպանութունն ամրապնդելու, կարմիր բանակի ու Նավատորմի—պրոլետարական դիկտատուրայի յերկրի ավատարիմ պաշտպանների մասին անդադար հոգալու համար:

1932 թ. կոլեկտիվ պայմանագրերի կնքման կամպանիան դուրս գալիս ու Անդրֆեդերացիայի տասնամյակին, վերը գոյութունն ու գաղափարները լավագույն որինակ է ազգային հարցի լենինյան լուծման:

Կոլեկտիվ պայմանագրերի կնքելու ժամանակաշրջանում անհրաժեշտ է առանձին պարզությամբ շեշտել ազգային խաղաղության և ժողովուրդների յեղբայրություն ստեղծելու գործում պրոլետարիատի դիկտատուրայի առավելութունները, Անդրֆեդերացիայի որինակը հակադրելով կապիտալիստական յերկրներում ազգամիջյան արյունահեղ ջարդերին և մի ազգի աշխատավորության միջոցով մյուս ազգի աշխատավորության բնաջնջելուն:

Անդրֆեդերացիայի ստեղծելու և ամրապնդելու համար նախաձեռնողն ու պայքարողը հանդիսանում է Անդրկովկասի աշխատավորության առաջավոր շեղատը—Բազվի պրոլետարիատը:

Կոլեկտիվ պայմանագրերի կնքման կամպանիայի որերում Բագխորհուրդը—Բազվի պրոլետարիատի դիկտատուրայի որդանը—երաշխատանքների հաշվետվությունը կտա:

1009
58785
38785
65785
92785

23208/1

Դրա հետ միասին անհրաժեշտ է կոլլեկտիվ պայմանագրերի ընդարկումը և 1932 թ. պլանի իրացումն ապահովելու միջոցառումները շաղկապել ընտրված պատգամավորների աշխատանքը, պատգամավորական խմբակների գործունեությունը ձեռնարկներում և ընտրողների տված նախադեմների իրագործման ստուգումը:

Կոլլեկտիվ պայմանագրերի կնքման կառավարման պետք է շաղկապել կանանց միջադպրախն օրի-մարտի 8-ի անցկացնելու հետ և դա պետք է միաժամանակ նախապատրաստություն ծառայի պրոֆ-միութենական հառաջիկա համագումարների համար՝ աշխատավորության լայն մասնակցություն մոբիլիզացիայի յենթարկելու, պրոֆմիությունները յերեսով դեպի արտադրություն դարձնելու, սոցմրցումն ու հարվածայնությունն (տնտեսաշրջակային բրիգադներ, հերթավորահանդիպակած պլանավորում և այլն) բարձր աստիճանին դնելու, ժողովրդա-տնտեսական 1932 թ. պլանի իրացման համար պայքարելու և դրա հիմունքով, աշխատավորության լայն մասնակցության նյութական-կենցաղային դրություն հետագա բարելավման համար:

1932 թ. կոլլեկտիվ պայմանագրերն իրենց հիմնական խնդիրը դարձնելով ընկ. Ստալինի վեց ցուցմունքների իրացումը, պետք է ապահովեն հնգամյակի ավարտական տարվա լիովին իրացումը և դրանով իսկ ստեղծեն բոլոր նախադրյալները 2-րդ հնգամյակի անգա-սակարգ սոցիալիստական հասարակություն ստեղծելու պլանի հաջո-նություն համար:

I. ՀՆԳԱՄՅԱԿԻ Յ-ՐԴ ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔ-ՆԵՐՆ ՈՒ 1932 թ. ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ ԿԱՍՊԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ղեկավարությունը կոմունիստական կուսակցության և նրա Լե-նինյան Կենտկոմի՝ ընկ. Ստալինի առաջնորդությամբ՝ բանվոր դա-սակարգը հնգամյակի Յ-րդ վճռական տարում հսկայական հաջողու-թյուններ ձեռք բերեց, ավարտելով մեր յերկրում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:

1931 թիվը կապիտալիստական տնտեսության արեցոր խորացող դաժան ճգնաժամի տարի էր, վերը կազմալուծեց արտադրական ուժե-րը և անհամար թշվառություններ բերեց բանվոր դասակարգի համար՝ փողոց նետելով միլիոնավոր սովալլուկներ:

1931 թվի արդյունքներն էլ ավելի պարզություն բացեցին յեր-կու՝ սոցիալիստական և կապիտալիստական սխտեմների—հակասու-թյունները:

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում խորա-նում և տնտեսական անկումը, ուժեղանում է քայքայման պրոցեսը, փողոց և նետվում գործադուրկների միլիոնավոր բանակը, վորի հետե-վանքով աճում է հեղափոխական շարժումը, և դրա պատճառով էլ տնտեսական ճգնաժամը քաղաքական ճգնաժամի է կերպարանափոխ-վում—սոցիալիզմ կառուցող յերկրում ակներև է տնտեսական և քա-ղաքական անընդհատ աճում, բանվոր դասակարգի և լայն աշխա-տավորության դրություն արժատական բարելավում և գործադրկու-թյան լիովին լիկվիդացիան:

1931 թիվը կապիտալիստական յերկրներում ընույթադրված է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տնտեսական անկումի ուժեղացումով:

Չուգունի հալելը—արդյունաբերության հիմքը—Ամերիկայում ընկել է 66%, Ֆրանսիայում—26%, Գերմանիայում—62%:

Համաշխարհային առևտուրն ընկել է այն աստիճանի, վերի վրա նա գտնվում էր 20 տարի առաջ: Գերմանիայի արդյունաբերական արտադրանքը 40 տարով հետ է նահանջել, հասնելով 1890 թվի մակերևույթին:

Կապիտալիստական յերկրներում արդյունաբերական արտադրան-քը 1931 թվին՝ համեմատած 1929 թվի հետ—կրճատվել է ավելի քան

25%, իսկ մի շարք յերկրներում ավելի շատ, որինակ Լեհաստանում— 28%, Ավստրիայում— 31% և այլն:

Իրենց թաղանթական բարձր գները պահպանելու համար կապիտալիստները վոչնչացնում են հսկայական քանակությամբ ապրանքներ, միլիոնավոր տոններով հացը շոգեզնացքների վառարանների մեջ այրելով, միլիոնավոր տոնն սուրճի ծալք թափելով և այլն:

Ապրանքների վոչնչացումով շահմանափակելով, կապիտալիստներն անցան արտադրական ուժերի վոչնչացման՝ կտրատելով սուրճի պլանտացիաները, ծածկելով ցանքադաշտերը և այլն: Դրա հետ միասին աշխատավարձի կրճատում, բոլոր տեսակի նպաստների կրճատում և խրոնիկական գործազրկության բանվոր դասակարգին հասցնում են աշխատեցման, նրա ուղղակի ֆիզիկական վոչնչացման:

Ուրհրդային Միությունում, մենք ունենք պատմության մեջ չտեսնված սոցիալիստական շինարարության բոլորական տեսակը, վորոնք հնգամյակի 3-րդ վճռական տարում ապահովեցին բանվոր դասակարգի և կոլտոզային գյուղացիության ձեռք բերած խաղաղ հաջողությունները:

1931 թվին հնգամյակը 2 և կես տարում հաղթանակով ավարտեցին ժողովրդական տնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են նավթը, ավիացիոն արդյունաբերությունը, մեքենայաշինությունը, էլեկտրոտեխնիկական արդյունաբերությունը, տրակտորակառուցումն և այլն:

Հնգամյակի 3-րդ վճռական տարում շարքերը մտան այնպիսի գրգռանքներ, ինչպիսիք են— Մոսկվայի ընկ. Ստալինի անվ. ավտոգործարանը, Ռոստովի Սելմաշը, Ֆարկովի տրակտորային գործարանը, Մոսկվայի էլեկտրոգործարանը, էլեկտրապողպատի գործարանը և այլն: 1932 թ. հենց սկզբի որերին արդեն գործի գցվեցին այնպիսի գիշերանոցներ: Ինչպիսիք են Նիժնեգորոդի ավտոգործարանն, Սարատովի կոմբայնների գործարանը: Հերթի են սպասում Մագնիտոստրոյը, Կուզնեցկեստրոյը, Դնեպրոստրոյը և սոցիալիստական ինդուստրիայի ուրիշ համաշխարհային զիզանոցներ:

1932 թվին գործել են սկսելու 24 նոր հալոցներ (յերբ կապիտալիստական յերկրներում 1931 թ. 8 ամսվա ընթացքում հանգցրված են— Ամերիկայում 29 հալոց, Ֆրանսիայում— 24, Անգլիայում— 21 և Գերմանիայում— 14 հալոց):

«Ամենակարճ ժամանակամիջոցում տեխնիկա-տնտեսականի կողմից անցնելու գերանցմանը առաջավոր կապիտալիստական յերկրներին» կուսակցության արձակած լոզունգի իրացման պայքարում մենք

1931 թ. ավելացրել ենք արտադրությունը Գերժողտնտեսության և Մատակարարման ժողովրդական գծով 20-21% և հնգամյակի 3-րդ վճռական տարում տաս յերկրների ընդհանուր արտադրանքի մեջ Ուրհրդային Միությունը հինգերորդ տեղից արդեն գրավում և յերկրորդ տեղը:

Ծանր ինդուստրիայի աճումը լուծեց գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման արագ տեսակերը և համատարած կալեկտիվացման բաղայի վրա՝ կուլակի՝ վաղեմ գաղակարգի լիկվիդացիան:

Ներկայումս արդեն կոլեկտիվացման և յենթարկված գյուղական տնտեսությունների 66 տոկոսը՝ ընդգրկելով գյուղացիական ցանքային տարածությունների 79 տոկոս:

Դա նշանակում և հնգամյա պլանով կոլեկտիվացումն դերակատարել 3 անգամ, կոլտոզային գյուղացուն կերպարանափոխել սոցիալիստական հողագործության կենդանի դեմքի՝ և գյուղում, պրոլետարիատի զիկտատուրայի իսկական ու ամուր հենարան դարձնել:

1931 թվին կազմակերպված և 1,244 մեքենա-տրակտորային կայան՝ ի գեմ 1929 թվի մեկի: Գյուղական տնտեսության սոցիալիստական գաշտերն են նետված մեր արտադրած 120 հազար տրակտորներ և 6,000 կոմբայններ (1929 թվի 29-ի դեմ) և հենց դրանով հաստատ տեխնիկական բաղա և զրկված գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տակ:

Գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղվածի հսկայական տեսակերի հետևանքով, հացահատիկային և տեխնիկական փուլտուրաների ընդհանուր արտադրանքը, չնայած 1931 թ. մի շարք հիմնական աշյոնների յերաշտին, 1930 թվի հետ համեմատած 7,5% աճում ավելց, իսկ ապրանքային արտադրանքն աճեց 9-10%:

Անհրաժեշտ և շեշտել նմանապես այն հաջողությունները, վորոնք յեղել են խորհրդային Միությունում ահագին քանակությամբ նոր ձևի մեքենաների ու սարքավորումների՝ արդյունաբերության զրկվածքներում, վորանց թվում կան այնպիսի բարդ մեքենաներ, ինչպիսիք են 50,000 կիլովատ ուժով շոգեուղերինը, Չեմաֆիկացիոն պիսիք են 12,000 կիլովատ ուժով, բլյումինգները, գյուղատնտեսական մեքենաների 70 տեսակի նոր ձևերը և այլն, և այլն:

«Մեր մեքենայաշինությունը 1931 թ. հաստատանց, վոր չկա այնպիսի մեքենա, վորի կառուցման մենք չկարողանանք տիրապետել» — (Կուլեբևով):

Հնգամյակի 3-րդ վճռական տարվա արդյունքները բնութագրված են նույնպես Ադրբեջանի ժողովրդական տնտեսությունից բուռն զարգացումով:

Նորհրդային Ադրբեջանում 1931 թ. նավթ և հանված 13,4 միլիոն տոնն, ի դեմ 1930 թ. 10,7 միլիոն տոննի (աճում 25%):

Բամբակ և հավաքված 1931 թ. 124,000 տոնն, ի դեմ 1930 թվի 50,000 տոննի:

Նորհրդային Ադրբեջանի արդյունաբերությունից մեջ կապիտալի ներդրումները 3 տարվան ընթացքում համարյա թե յերեք անգամ աճեցին, 36,8 միլ. ուրբույց մինչև 107 միլիոնի հասնելով 31 թվին:

Ադրբեջանի Գերտնախորհի բոլոր ձեռնարկների արտադրանքը 1931 թվին կազմում էր 70 միլիոն ուրբի՝ ի դեմ 1930 թվի 40,227 հազար ուրբույ:

Տեղական արդյունաբերությունը 1931 թվին աճել է 63%՝ 1930 թվի հետ համեմատած:

Նորհրդային Ադրբեջանի գյուղական տնտեսության մեջ կապիտալի ներդրանքը 29—30 թվ. 16 միլիոնից աճել է 162 միլիոն ուրբի 1931 թվին:

1928 թ. Ադրբեջանում գյուղական բոլոր տնտեսությունների թվից կոլեկտիվացրված է 1%, 1930 թ.—13%, իսկ 1931 թ.—45,9%, ի դեպ բամբակային ուսյուններում կոլեկտիվացման է յենթարկվել 61,8%:

Այդ հաջողություններն արդյունք են հանդիսանում բանվոր զասակարգի, կոլխոզային գյուղացիության և չքավոր-միջակային մասնանների հերոսական ջանքերի, նրանց ստեղծագործական նախաձեռնության հզոր վերելքի և արտադրական-քաղաքական ակտիվության, վորոնք իրենց պարզ ու կոնկրետ արտահայտությունը գտան սոցիալական, հարվածայնության, հերթափոխ-հանդիպակած պլանային վարման, բրիգադային տնտեսաշրջանի և աշխատանքի սոցիալիստական ձևերի բուռն արտահայտությունից:

Հնգամյակի 3-րդ տարվա հաջողությունները, վորոնք ձեռք են բերվել ամբողջ ֆրոնտի վրա ծավալուն աշխատիստական հարձակման, զասակարգային պայքարի սրված պայմաններում՝ ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, կուսակցության գլխավոր գծի ճշտության լավագույն ապացույց են հանդիսանում, վորը բանվոր զասակարգին մարիլիզացիայի և յենթարկում յերկրի սոցիալիստական ինդուստրացման արագ ու մարտական տեմպերի համար: Այդ հաջողությունները կրկին անգամ զարկում են կուլակային ագենտուրային—աջ ուղի-

տունիզմին, վորը գլխավոր վտանգն է հանդիսանում տվյալ ետադում, «ձախլիկներին» ձուլմանը և նրանց հետ հաշտվողականությունից ու հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդներին, վորն ապարդյուն աշխատանք էր տանում մեր յերկրում սոցիալիզմի կառուցմանը խանգարելու:

Հնգամյակի 3-րդ տարվա խոշոր հաջողությունների հետ միասին պետք է մատնանշել և արդյունաբերության մի շարք հիմնարկների ու ճյուղավորումների կողմից յերեք արդեֆինպլանի թերակատարումը, դրանց թվում և Ադրբեջանում (նավթ), առանձնապես ինքնարժեքի իջեցման և արտադրողականության բարձրացման մասում՝ աշխատավարձի ավելի բարձր աճման ժամանակ:

Աշխատանքի արտադրողականություն Նորհրդային Միության արդյունաբերության մեջ բարձրացավ 34%՝ հնգամյակով 5 տարվա ընթացքում 110% բարձրանալու փոխարեն:

1931 թ. մենք ինքնարժեքի աճում ունեինք հնգամյակով նախատեսված 2%-ի դեմ՝ 7,6%: Ինքնարժեքի իջեցման մասում պլանի թերակատարումը նշանակում է՝ խոշոր կորուստներ ժողովրդական տնտեսության համար:

Ինքնարժեքի աճումից կորուստները ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերում 1930 թ. կազմում են 1 և կես միլիարդ ուրբի: Իսկ 1931 թ. ինքնարժեքի իջեցման պլանի վերաբերմամբ կորուստները կազմում են 4 և կես միլիարդ ուրբի:

Ադրբեջանում նավթահանության պլանը կատարված է 88,3%:

Ադրբեջանի մի շարք ձեռնարկներում ինքնարժեքը բարձրացավ (Ալստաթյուրեստ—5,2%, Ազկոթ—9,2), Մի շարք ձեռնարկներում բարձրացան պրոդուկտները (Ալշիյալթ—1,4%, Ազխիմ—0,3%):

Այդ բոլորն արդյունք են ընկ. Ստալինի վեց պայմանների վոչ բավարար չափով իրացնելու, աշխատանքի վատ կազմակերպման և անդիմություն, աշխատավարձի միանգամայն վոչ բավարար սխառմի հզորմարքայնության թույլ գործադրություն, պրոֆիտությունների և աշխատավարձի կառուցման, անբավարար աշխատանքի հետևանք, մի քանի պրոֆիտավորման, անբավարար աշխատանքի հետևանքների կողմից աշխատավարձի կառուցման յերկրի թերակատարման, վորն աշխատանքի արտադրողականությունը բարձրացնող կարևոր լծակ է հանդիսանում, առանձնապես վարակյալ և առաջատար պրոֆեսիաների ու ինժեներատեխնիկական աշխատավորների վերաբերմամբ:

Սոցիալիստական շինարարություն և յերկրի պաշտպանողականության շահերը պահանջում են հնգամյակի 4-րդ յեղբարակիչ տարվա ընթացքում մտրիլիզացիայի յենթարկել բանվորական մասսաներին ասեն մի կոնկրետ տեղամասի վրա՝ ժողովրդական տնտեսությունը ճյուղերում համայն պլանները 4 տարում լիովին իրացնելու համար, և հենց զրահել, մարտական նախապատրաստություն մեջ դնել բոլշևիկյան յերկրորդ հնգամյակին—անդատակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Հնգամյակի 4-րդ տարին պետք է վերակել համար մղվող պայքարի տարի դառնա, արգֆինպլանի բոլոր թվական և վերականգնողական յերկրորդ տարի պայքարի տարի՝ աշխատանքի բարձր արտադրողականություն, ինքնարժեքի իջեցման համար, «քանի վոր աշխատանքի արտադրողականությունը—դա վերջին հաղթում ամենակարևորն է, ամենագլխավորը նոր հասարակարգի հաղթանակի համար» (Լենին):

1932 թ. կոլպայմանագրերի կնքման կամպանիան պետք է լինի յերկուկողմանի կոնկրետ պարտավորությունների կամպանիա, վորն ապահովի տնտեսական օրդանների արգֆինպլանների և հանդիպակած արգֆինպլանների (արտադրանքի բաց թողում, աշխատանքի արտադրողականություն, ինքնարժեքի իջեցում, արտադրանքի վորակ) թվական և ուսանձնապես վորակական ցուցանիշները, նույնպես և արտադրություն մեջ միանձնավորության և աշխատանքային դիսցիպլինայի ամրապնդումը:

1932 թ. կոլպայմանագրերի կնքման կամպանիան պետք է անցկացրվի ինչպես մասսայական տնտեսական-քաղաքական կամպանիա՝ բոլշևիկյան լայն ինքնաքննադատության հիմունքով և յժակ հանդիսանա մասսաների ստրիկիզացիա անելու մեջ՝ ընկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքներն իրացնելու համար, վորը հաղթանակի բանալի և հանդիսանում սոցիալիստական շինարարության բոլոր տեղամասերում, ապահովելով 1932 թվի—հնգամյակի յեղբարակիչ տարվա պլանի մարտական իրացումն և այդ հիման վրա ել՝ բանվոր դասակարգի աճող նյութական-կենցաղային և կուլտուրական պահանջներին հետագա բաշխվակումը:

II. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԿԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲԱՐՈՐՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

Յերկրի ինդուստրացման արագ տեմպերն ուղեկցվում էին բանվոր դասակարգի նյութական և կուլտուր-կենցաղային բարձրության աճումով:

Խորհրդային Միության բանվոր դասակարգի բանակը միայն 1931 թ. աճել և 4,3 միլիոն հոգով (14,360 հազարից մինչև 18,700 հազար մարդ):

Խորհրդային Միությունը միակ յերկրն է, ուր վերջ և զրկած գործադրկությունը:

Յեթև Խորհրդային Միության բանվորների աշխատավարձը հնգամյակի առաջին 2 տարում աճել և 12%, ապա 1931 թ. աշխատավարձն աճել և 18%:

Առանձնապես արագ և աճում ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի բանվորների աշխատավարձը:

Սև մետաղագործության, պղնձահանքային և քարածխային արդյունաբերության բանվորների աշխատավարձի հավելումն կազմում և 25—36%:

Բավականաչափ բարձրացրված և նմանապես յերկաթուղային և ջրային արանսպորտի, առանձնապես առաջատար խմբակներն աշխատավարձը—35—50%:

Աճում և վոր միայն առանձին բանվորներն աշխատավարձը, այլ և աճում և բանվորական ընտանիքի ամբողջ բարձրությունը:

Բանվորական ընտանիքի յեկամուտը 1931 թվին ավելացել և 25%, իսկ հնգամյակի առաջին 3 տարում 64%, 1929 թ. 89 ուրբուց բարձրանալով մինչև 146 ուրբու՝ 1931 թ. վերջում:

Բնակկառուցման հատկացումները 1930 թվին 582 միլ. ուրբուց հասել են մինչև 1 միլիարդ, ի դեմ—1931 թվին 156 ուրբու:

Հասարակական օժնդավ ընդգրկումը, վոր 1929 թվին սեկ և կես միլիոն էր, 1931 թվին հասավ 12 միլիոնի:

Հանդուսյան տներ ու կուրորտներ են ուղարկված 1931 թվին մոտ միլիոն մարդ—1927-28 թվին 480 հազարի դեմ:

Անշեղ կերպով իրադործելով կուսակցության գիծը՝ դպրոցի բանվորականացման և իր սեփական բանվոր դասակարգից արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու գործում, մենք 1931 թ. բարձրագույն դպրոցներում ունենինք—394 հազար աշակերտ, տեխնի-

կումներում—852 հազար, բանֆակներում—325 հազար և ֆարգործուսի
դպրոցներում—1,118 հազար—1930 թ. 586 հազարի դեմ:

Ժողովատեղերի ստորհի արդյունաբերության բանվորների 85% անց
և կացրված 7 ժամյա բանվորական ուղիով:

Մենք մի շարք հիմնարկներ ունենք, ուր հնգորյա շաբաթի են
անցել:

Նման տեղերում էլ գնում և Ադրբեջանի բանվոր դասակարգի
բարձրության աճումը:

Նախարարության արդյունաբերության բանվորի միջին-ամսյա աշխատավար-
ձը 27-28 թ. յեղել է—77 ուրլի 93 կոպեկ, 28-29 թ.—86 ուրլ.
89 կոպ. և 29-30 թվին—91 ուրլ. 28 կոպ., իսկ 31 թվին աճումը—
10-12%:

Ադրբեջանի ժողովատեղերի ստորհի արդյունաբերության մեջ բան-
վորական միջին-ամսական աշխատավարձը կազմում էր 27-28 թ.—66
ուրլի 22 կոպեկ, 28-29 թ.—72 ուրլ. 58 կոպ., 29-30 թ.—77 ուրլ.
77 կոպ., իսկ 31 թ. աճում ավելց 5,3%:

Աշխատավարձի աճման հետ անշեղ կերպով աճում է բանվորնե-
րի ոչալ կենսական մակերևույթը՝ սոցիալական ֆոնդերի տարեց տա-
րի աճման հիման վրա վերը ծախսվում են բանվորների սպասարկ-
ման վրա, ի հաշիվ պետական և հասարակական կադմակերպություն-
ների:

Ազատցատրախի բյուջեն հնգամյակի 3 տարվա մեջ 23,7 միլիոն
ուրլուց հասավ 41 միլիոն ուրլու 1931 թվին:

Բազմաբնույթի գծով (սոցալադհովադրության միջոցներից դուրս)
առողջապահության վրա արած ծախսերը, առանց հաշվելու շինարա-
բության վրա արած ծախսերը, 1931 թվին կազմել է 12,6 միլիոն ո.
29-30 թ. 9,6000 հազար ուրլու դեմ:

Բանվորների կուլտուրական սպասարկման աճումը բնույթագր-
ված է ժողովրդական կրթության Բազմի բաժանմունքի բյուջեի ա-
ճումով—29-30 թվին—8 միլ. ուրլի, 11,5 ուրլի—31 թվին: Պրոֆ-
միությունների կուլտֆոնդը 31 թվին աճեց միջև 5,8 միլիոն ուրլի՝
ի դեմ 1929 թ. 3,9 միլ. ուրլու:

Միայն Բազմում բնակկառուցման հատկացումները 1931 թ. կազ-
մեցին 15,7 միլ. ուրլի—1929-30 թվին 13,5 միլիոն ո. դեմ:

Հասարակական սննդի գծով 31 թվին միայն Բազմ քաղաքում
բացված է 618 ճաշարան, վորն ընդգրկում է 200,000 ճաշող:
Խորհրդային Միության բանվորական մասսաների բարձրության աճու-
մը կատարվում է կապիտալիստական յերկրների աշխատավոր մասսան-

ների նյութական-կենցաղային դրուժյան աճող վատթարացման ֆո-
նի վրա:

Կապիտալիստական ձգնաժամի ամբողջ դաժան ծանրությունը
կապիտալիստները գցում են բանվոր դասակարգի ուսերի վրա:

Կապիտալիստական յերկրներում գործադուրկների թիվը անցել
է 40 միլիոնից, իսկ նրանց ընտանիքների անդամների հետ—100 միլ:

Կապիտալիստական յերկրներում սուր կերպով իջնում է աշխա-
տավարձը:

Գերմանիայում աշխատավարձն իջեցրված է 28%, Ամերիկա-
յում—26 տոկոս, Անգլիայում—23 տոկոս, Իտալիայում—30:

Այսպիսով, հակառակ բոլոր տեսակի ոպորտունիստների և հատ-
կապես աջ-«ձախ» բուկի զրպարտություններին, մեզ մոտ բանվոր
դասակարգի նյութական և կուլտ-կենցաղային բարձրության անշեղ
աճում կա, վորը կուսակցության գլխավոր գծի անշեղ կիրառման
հետևանք է հանդիսանում:

III 1931 թվի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1932 թվի հաջող ավարտումը կարելի է կատարել միայն սոցիա-
լիստական արդյունաբերության և շինարարության հետագա ուժեղաց
բաժ ծավալման միջոցով, ընկ. Ստալինի վեց ցուցմունքների լիակա-
տար կիրառման համար էլ համառ պայքարելով, մեզ մոտ յեղած ժող-
վրդական տնտեսության ահագին ներքին միջոցների ոգտադործումով
և առաջին հերթին, ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյու-
ղերի—արդյունաբերության, վառելիքի, մետաղագործության, մեքենա
յաշինության ու տրանսպորտի ծավալումով:

1932 թվի ժողովրդա-տնտեսական պլանը սահմանում է.—ժողովր-
դական տնտեսության համախացրած սեկտորում հիմնական ներդրում
ների ընդհանուր գումարը 21,1 միլարդ ուրլի (31 թվի 16, միլիարդի
դեմ):

Պետարդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճում 36%
—ի դեմ 1931 թվի 20-21%-ի, վոր նշանակում է նախապատերազմային
արդյունաբերության չափից անցնում և չորս անգամ:

Արդյունաբերության միջոցներ արտադրող արդյունաբերության
աճումը վորոշված 44%:

Հայն սպառման առարկաների արտադրող արդյունաբերության
աճումը սահմանված է 22 տոկոս:

Արտադրանքի ինքնարժեքի իջեցումը սահմանված է 7 տոկոս:

Ճանքադաշտերի չափը հասցրված է 141 միլիոն հեկտարի (հնգա

մյուս պլանի (լիովին իրացում) ի դեմ 1931 թվի 137,5 միլ. հեկտարի: Համայնացրած սեկտորի ցանքսերը կազմում են 22 միլիոն հեկտար— (սովխոզները 14 միլիոն հեկտար, կոլխոզները 108 միլ. հեկտար):

1932 թվին նոր սեքենա-տրակտորային կայաններ են կազմակերպվում 1,700 ի դեմ հնգաժյակի առաջին յերեք տարում կազմակերպված 1,400-ի:

Կենտրոնական խնդիր ե հանգիստնում պայքարը՝ կոլխոզները
կազմակերպչա-տնտեսական և քաղաքական ամրապնդման համար,
վորը, նման ռեժեղ տեխնիկական բազա դնելով գյուղական տնտեսու-
թյան վերագնաուղծման տակ, ապահովում ե 1932 թվին հիմնականում
ավարտել կոլեկտիվացումը և դրա հիման վրա կուլակտիթյան՝ վերադա-
դասակարգի վերացումը խորհրդային Միությունում ամբողջովին ու
դրա թվում և խորհրդային Արդյունաբերի բամբակային ոռոգանքը:

Համայնացրած սեկտորի զծով քաղաքային բնակեցության
սեջ է դրվում 1,942 սիլ. սուրլի և կամուսով տնտեսության և բարե-
կարգման - 950 սիլ. սուրլի, վերջ կազմում և ավելի քան կրկնակին -
1931 թ. ներդրումներից:

ժողովրդական անտեսության լալն սպառման ապրանքների ֆոնդին աճելուամ է 30 տոկոս (27,2 միլիարդ 1931 թվին մինչև 35,5 միլիարդ սուրյի 1932 թվին):

Այսպիսով ժողովրդական տնտեսության մեջ բանվորների ու ծառայողների թիվը 1931 թ. 18,7 միլիոն մարդուց ավելանում է 21 միլ. 1932 թվին:

Աշխատավարձի տարեկան ֆոնդը 1931 թվի 21,1 միլիարդ ոսկի-
յուղ հասնում 26, 8 միլարդ ոսկրի—1932 թվին,

Կուլտուր-տոցիարական կարիքների վրա արվող ընդհանուր ծախսերը 1931 թ. 6,6 միլիարդ ռուբլուց հասնում է 9,2 միլիարդ ռուբլի 1932 թվին:

Բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրության ընդհանուր բյուջեն 1932 թվի համար վորոշված և 3,5 միլիարդ ռուբլի—ի դեմ 1931 թ. 2,5 միլիարդի:

Աղբբեջանոյ Ժողովրդա-տնտեսական 1932 թվի պլանը սահմանուած է.

Նազիրյանների ընտանիք — — — 15,5 միլ. տոնն.

Հորափորություն (շահագործական և հետախուզ. 573 հազ. մետր)
Բամբակային ցանքսաղաշտերն աճուս են մինչև 226,8 հազ. հեկտ.
Ֆեդիպտական բամբակի ցանքսեր — 10,000 հեկտար

Մի հեկտար բամբակի բերքատվութիւնը սահմանված է 8 ցենտ.

Աղբ ժողանախորհրդի ձեռնարկների արտադրանքի աճուժը սահմանված է 120,2 միլ. ռուբլի:

Կոմունալ բնակիկառուցման մեջ հիմնական ներդրումների չափը —
մինչև 82 միլ. ռուբլի:

Ստեփան-կուլտուրական շինարարութեան մեջ հերոդոտմաներ մինչև
103 միլ. ուղղութիւն:

Ձեռն վարդապետ մինչև մեկ միլիոն ցենտներով:

Հնգամյակը 4 տարում ավարտելու հակայական պլանի կենսագործումը, առանձնապես նրա վերականգնողական ցուցանիշներում, ամեն մի կոնկրետ տեղամասում պլանի իրացման ստուգումը, համամիութենական 17-րդ կուսկոնֆերանսի, ՎԵԿԿՊԵ-ի (Բ) Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի, Սոդկոմկոմի 11-րդ համագումարի, Բապվի 20-րդ կոնկուրենցիաների վերջում անհրաժեշտ կերպով կյանքի մեջ կենսագործումը, պայքար մասսաների մարքս-լենինյան դաստիարակության համար, Մոսկովկասի աշխատավորության ինտերնացիոնալ զոգման ամբաստանման՝ ի դեմս սեծապետական շովինիզմի—վորպես գլխավոր մտանգի ու տեղական նացիոնալիզմի—պահանջում և բանվոր դասակարգի բոլոր ուժերի լարում և նրա մարտական համախմբվածության լենինյան կուսակցության հիմնական գծի շուրջը:

Այդ խնդիրներն իրենց արտացոլումը պետք է գտնեն 1932 թ. վերակնքվող պայմանագրերի մեջ, վերոնք պետք է վավերագրեր հանդիսանան, ուր գրանցված լինեն բանվորների կոնկրետ պարտավորություններ՝ բանվոր դասակարգի տնտեսական-քաղաքական հերթական խնդիրների իրացման և տնտեսավարների կանկրետ պարտավորություններ՝ ընկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքների համաձայն՝ աշխատանքները նոր ձևով վերակառուցելու և բանվորների կուլտուր-կենցաղային շրջաօրվան հետագա բարելավման համար:

IV.ԸՆԿ. ՄՏԱԼԻՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԵՑ ՑՈՒՑՍՈՒՆՔՆԵՐԸ
1973 ԹՎԻ ԿՈԼԼԵԿՏԻԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ

1. ԿՈՆԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄՉ

Կողպայմանագիրը՝ ընկ. Ստալինի վեց ցուցմունքների հիման վրա կոնկրետ գործնական յերկկողմանի պաշտավորութ յանների գործողութ յան ժարտական ծրագիր պետք և հանդիսանա:

Նոր կուլպայամանագրերի տնային խանութները քննարկություններ մասնակցելու համար մասնաճյուղերին մեծ չափով զբաղվելու և ստորին տնտեսական ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների պատասխանատվությունը բարձրացնելու համար ֆարգործկոմը նոր կուլպայամանագրերը

վարչության հետ կնքում և անսպասան ձեռնարկում (հիմնարկությունում) վերադաս տնտեսական և պրոֆիկադակերպությունների ղեկավարությամբ:

Միությունների կենտրոնական վարչությունները, համաձայն համապատասխան միությունների կենտրոններից ստացված լիմիտների, ընդհանուր համաձայնություններ են կնքում տնտեսմիության հետ:

Ընդհանուր համաձայնությունները վերոշույցում են աշխատավարձի բարձրացման ֆոնդերի չափերը, 1932 թվի արդֆինպլանի հիմնական ցուցանիշները (արտադրանքի աճում, աշխատանքի արտադրողականություն, ինքնարժեքի իջեցում), նախապես և բնակարանային և կուլտուր-կենցաղային շինարարության ֆոնդերը և աշխատանքի պաշտպանության միջոցառումների համար ծախսերը:

Կենտրոնական վարչությունների (իսկ վորտեղ բացակայում է կենտրոնական վարչությունը—Միությունների կենտրոնական կոմիտեն) և տնտեսմիությունների հետ կնքած ընդհանուր համաձայնություն ֆաբրիկայի կողմից ձեռնարկի (հիմնարկի) վարչության հետ կնքում են կոլպայմանագրեր, վորոնց նախագծերն անսպասան նախորդ քննություն են դրվում բանվորական ժողովներում (ցեխերում, խմբակներում, տեղամասերում, բրիգադներում, հերթափոխություններում և այլն):

Բացի դրանից, խոշոր ցեխերում, վորոնք տնտեսաշարակով են աշխատում, կնքվում են (միայն միության կենտրոնի թույլտվությամբ) լրացուցիչ համաձայնություն՝ և լրացումն ընդհանուր կոլպայմանագրի:

Ընդհանուր համաձայնություն հիմնական պայմանները պարտագիր են յերկու կողմերի պրոֆիսիոնալ և տնտեսական ստորադաս կազմակերպությունների համար և կարող են փոփոխության յինթարկել միայն արտադրական ցուցանիշների բարձրացման կողմը (ընդհանուր արտադրանք, վորակ, աշխատանքի արտադրողականություն, ինքնարժեքի բարձրացում), տնտեսահաշվային բրիգադների և հարվածային բրիգադների հարվածայինների հանդիպակաձ պարտավորությունների հենց բանվորական մասսաների ու ինժեներատեխնիկական աշխատանքների կողմից առաջադրման հիման վրա:

Հիմնարկի ներքին միջոցների մեծագույն մորիլիզացիայի նպատակով, հանդիպակաձ պարտավորությունների ամենակարևոր պայմանը պետք է հանդիսանան վորակական ցուցանիշները:

Աշխատավարձի ելևանքները ընդհանուր համաձայնություն մեջ չեն կարող փոփոխության յինթարկել ստորադաս տնտեսական և պրոֆիսիոնալ կազմակերպությունների կողմից վոչ բարկացներու և վոչ իջեցներու կողմը:

2. ԱՐԴՖԻՆՊԼԱՆԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոլպայմանագրերն իր հիմնական խնդիրն է դնում—ընկ. Ստալինի վեց ցուցումները իրացումը, ապահովել հնգամյակի յեզրափակիչ 4-րդ տարվա արտադրական-տնտեսական առաջադրություններին հաջող կերպով կատարումը և այդ հիման վրա Խորհրդային Միության ջող կերպով կատարումը և բոլոր աշխատավոր մասսաների նյութական և բանվոր դասակարգի և բոլոր աշխատավոր մասսաների նյութական և կուլտուր-կենցաղային դրության հետագա անընդունելի բարելավումը:

Համաձայն դրան—վարչությունը, ֆաբրիկայի, բանվորները, ինժեներատեխնիկական աշխատավորներն ու ծառայողներն իրենց վրա պարտավորություն են վերցնում 1932 թվի համար առաջադրած արդֆինպլանի վորակական և թվական ցուցանիշների կատարելը և նմանապես, հանդիպակաձ պարտավորություններից բղխող առաջադրությունը:

Արդֆինպլանի կոնկրետ ցուցանիշների թվեթիվ հետ, պետք է վորոշվեն և այն կոնկրետ միջոցառումները, վորոնց ոգնությամբ կողմերը պարտավորվում են արդֆինպլանը իրագործել:

ՈՐԻՆԱԿ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Ե.

Բանվորներին անընդհատ նյութեղեն, գործիքներ և այլն մատակարարել:

Կազմակերպված կերպով բանաժ հավաքել, ավելորդ բանուժը յիրևան հանել և պլանային կերպով վերադասավորել նրանց:

Աշխատանքներն ոգտագործել կանոնավոր կերպով և վերացնել անդիմությունը:

Պլանային—նախագրողական վերանորոգություն կատարել: Արմատավորել ուղղակի և արդյունավետ գործարքայինը և վարձատրության ուրիշ խրախուսիչ սիստեմները, ավելացնել գործերի տեխնիկական նորմայացմամբ ընդգրկումը և ապահովել արտադրանքի և վստաստի ճշտիվ հաշվահառումը:

Անհրաժեշտ միջոցառումներ ձեռք առնել աշխատանքի պաշտպանության ու առողջացման պայմանների համար:

Ամեն կերպ աջակցել աշխատանքի սոցիալիստական ձեերի կազմակերպման տարածելուն—հարվածային բրիգադ, արխակելի արտադրանքի բրիգադ, տնտեսահաշվարքային բրիգադ, հերթափոխ-հանդիպակաձ պլանավորում և այլն:

Ամեն կերպ աջակցել հասարակական անդի, աշխատավորների բնակարանային և կուլտուր-կենցաղային դրության բարելավմանը:

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ, ԻՆժԻՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱ- ՏԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ՊԱՐՏԱ- ՎՈՐՎՈՒՄ ԵՆ

Լիովին իրագործեն իրենց ձեռնարկի արդիւնաւանքը: Ամեն կերպ ամբապնդեն աշխատանքային գիտելիքներն: Միմիւրեւի հասցնեն խոտանքը և պարապուրդը, ամեն կերպ բարձրացնեն արտադրանք և փորակը: Խնայողութեամբ վերաբերվին գեպի սարքավորումները:

Սիւսեմատիկորեն բարձրացնել իրենց վարակաւորումը:

Աջակցութեամբ ցույց տան կուսակցական և պրոֆէկտակերպութեաններին՝ նոր բանութեան իրաւունք-քաղաքական սպասելիքները:

Աջակցեն արտադրութեան մեջ ընտանիքի անդամներին գրավելուն և ոգնել ավելորդ բանութի յերեւան հանելուն:

Ինժիներակա-տեխնիկական աշխատավորներն ու վարակյալ բան-վորները պարտավորուած են իրենց արտադրական փորձն ու գիտա-թեւանքը հանձնելն բանութեանը նոր կազմերին: Ոտարադրի բանութեան-րն ու մասնագետները պարտավորուած են իրենց արտադրական-տեխ-նիկական փորձառութեանը տալ ձեռնարկի բանութեաններին ու ինժի-ներա-տեխնիկական աշխատավորներին:

ՖԱԲՐԻԿԱՆԵՐԿՈՍԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Ե

Մորիլիգացիայի յենթարկել ձեռնարկի բանութեաններին, ինժիներա-տեխնիկական աշխատավորներին ու ծառայողներին՝ արդիւնաւանի կատարման ու գերակատարման շուրջը, նրանց մեջ ել ավելի զար-գացնելով սոցմրցումը և հարվածայնութեանը, դուստարարութեանը, արտադրական խորհրդակցութեաններին աշխատանքների և աշխատան-քի կազմակերպման հարցերին նվիրված ուշադրութեանն ու ծիւղացնե-լու միջոցով:

Բանութեան ակտիւ միջոցով սիւսեմատիկ հակագութեան կազ-մակերպել՝ արդիւնաւանի իրացման ընթացքին հետեւելու համար:

Մասնակցել բանութեան ընտանիքների անդամներին արտադրու-թեան մեջ ներգրավելու գործին, կոլտոգների հետ սոցալաւմանագրեր կնքելուն, տարողնացութեանը (отходничества), սպնելով՝ չեփա-

յին աշխատանքի կարգով՝ կոլտոգներում աշխատանքի կազմակերպ-ման, հաշվաւման և յեկամութեան լարվման գործը կարգաւորելուն, հա-ապահովելով սոցալաւմանագրերի քաղաքական մասի կատարումը, հա-վաքաղրված բանութեան իրաւունքի կուլտուրական և կենցաղային սպասար-կումը:

Վճռականորեն պալքարել աշխատանքի գիտելիքներայի ամբապնդ-ման համար՝ կուլտ-քաղաշխատանքի զարգացման միջոցով և հասարա-ման համար՝ կուլտ-քաղաշխատանքի զարգացման միջոցով գեպի գշլուկները, չվող կական ներգործութեան միջոցներ գործադրելով գեպի գշլուկները, չվող ները և աշխատանքային գիտելիքներայի ուրիշ խախտողները:

Ակտիւ կերպով մասնակցել աշխատանքի կազմակերպմանը, տեխ-նիկական նորմալացման դեմքին, աշխատավարձի վերակաւորումները, ակտիւ բանութի յերեւան հանելուն և նրանց պլանային բաշխմանը: Պալքարել բանութեան մատակարարման բարելավման համար և ապահովել հոկոգութեանը և գործնական սպնութեանը բանշնանելի, մասնակաւորների, ալգիների և բաղնիքների կատարման վրա:

Ծաւալել բանութեան իրաւունքի վերակաւորումն բարձրացնելու համար տեխնիկական խմբակներին ցանցը:

Ամեն կերպ աջակցել վարչութեանը ակտիւների ու հրդեհների գեմ պալքարելու գործին, ապահովելով միութեան անդամների ակտիւ մասնակցութեանը՝ բանութեան հրդեհաշեջ խորակներում:

3. ԲԱՆՎՈՐՍԿԱՆ ՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՄՈՎԱԾ ՇԱՎԱԲԱԳՐՈՒՄ, ԿԱԳ- ՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ

Կողալաւմանագրերում անհրաժեշտ և նախատեսել վարչութեան կողմից բանութեան կազմակերպված ուժ հաւաքելու կոնկրետ կար-գը՝ կոլտոգների կամ աշխատանքի քրգանների հետ պալմանագրեր կնքելու և արտադրութեան մեջ բանութեան ինժիներա-տեխնիկական աշխատավորների ու ծառայողների ընտանիքի անդամներին ներգրա-վելու միջոցով:

Կանանց աշխատանքն արմատաւորելու նպատակով կողալաւմանա գրերում պետք և աշխատանքների ու պալմանների սպասող ցուցակ սահմանել, վորնք յենթակա լինեն բացառապես կանանցով փոխարի-նելու, և նոր ընդունածների համար պետք և կազմակերպվեն կարճատե կապնութեանը՝ արտադրութեան հետ ծանոթացնելու համար:

Պետք և նախատեսել աշխատավարձերից՝ հարվածայնաների, յե-րտաւորութեան և կանանց թիւից՝ առաջ քաշումը, և ալգ գեպում ալգ առաջ քաշումը պետք և կատարել վարչութեան կողմից տան մի Բեռուսյակում կազմած պլանի համաձայն:

կողպայմանագրերում պետք է վորոշ գումար սահմանել—բանվորների համար տեխնիկական գրադարաններ ու տեխնիկական կոնսուլտացիաներ կազմակերպելու համար:

կողպայմանագրերում անհրաժեշտ է նախատեսել տեղական աղ-գությունների բանվորներին արտադրութեան մեջ ներգրավելուն: ա-սլահովիւով նրանց վորակավորման սխտեմատիկ կերպով բարձրաց-նելը:

Բանվորների արտադրական կքսկուրսիաների կազմակերպումը:

Բանվորների (վորոշ քանակութեամբ) հեռակա տեխնիկական դասընթացքների ուսման վճարը:

Պետք է նախատեսել բանվորների ճիշտ թիվը, վորոնք պետք է նախապատրաստուին ու վերապատրաստուին վարչութեան կողմից՝ ուս-ման տեսակները մատնանշելով:

Այդ դեպքում հատուկ ուշադրութեւն պետք է դարձնել նորմա-վորիչների դասընթացքների կազմակերպմանը:

Նույնպես պետք է ցույց տրուին ֆարգործուտի դպրոցում ըն-դունվող աշակերտների թիվն ու ընդունելութեան ժամկետը և նրանց ուսուցման ու ուսումնա ավարտելուց հետո նրանց ոգտագործման կարգը:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

կողպայմանագրերում պետք է մտցրվին վարչութեան հետևյալ պարտավորութեւնները—

Ամեն կերպ աջակցութեւն ցույց տալ դյուտարարներին և ու-ցիոնարիդատարական առաջարկութեւն մտցնող աշխատավորներին՝ արագ փորձաքննութեւն, տեխնիկական ոգնութեւն ցույց տալու մի-ջոցով և մրցանակի արժանացնելով այն առաջարկութեւններն ու դյուտերը, վորոնք տնտեսական եֆֆեկտ են տալիս:

Հարվածային և տնտեսաշարքային բրիգադների, սոցմրցման և հերթափոխ-հանդիպակած պլանավորման աշխատանքների վորակական և քանակական սխտեմատիկ հաշվետու տանել:

Ամեն կերպ աջակցել բրիգադների տնտեսաշարքի անցնելուն: Բրիգադների աշխատանքների համար ցուցանիշների մշակման, բրի-գադների հետ իր ժամանակին պայմանագիր կնքելու միջոցով, անշեղ կերպով իրագործելով բրիգադի առաջ իր վրա հանձն տրած պարտա-կանութեւնները և արտադրական նվաճումները իր ժամանակին պար-գեադրելով:

Լայն կերպով ծավալել պարգևատրման սխտեմը (սոցմրցման ֆոն-դերից), լավագոյն արտադրական արդյունքների, սոցմրցման և աշխա

տանքի կազմակերպչական նոր ձևերի ծավալման նախաձեռնութեւն համար, վորոնք նախատեսւմ են արդֆինպլանի արագ կատարմանը:

կողպայմանագրերում պետք է սահմանվին վարչութեան, ֆարգործ տեղկոմի, բանվորների, ինժ-տեխնիկական աշխատավորների և ծառա-յողների պարտավորութեւնները՝ աշխատանքի դիսցիպլինայի ամրա-պնդման համար՝ միավարչութեան հաստատ անցկացնելու հիման վրա՝ շարկապված կուլտուր-քաղաքական աշխատանքների հետ:

5. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՅԵՎ ՏԵԽՆՈՐԱՅԱՑՈՒՄ

Աշխատանքի արմատական վերակառուցում՝ ընկ. Ստալինի ցուց-մունքների հիման վրա—«վերացնել հավասարանքը և ջարդել հին տա-րիֆային սխտեմը» հանդիսանում է կողպայմանագրի կարևոր խնդիր-ներից մեկը:

Տարիֆային ռեֆորմների միաժամանակ և մեքենայաբար անցկաց-նելը ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում աննպատակ է հան-դիսանում, դրա համար ել տարիֆային ռեֆորմի լավագոյն նախա-պատրաստութեան համար, այդ ռեֆորմը կանցկացվի—առաջին հեր-թին—ժողովրդական տնտեսութեան կարևորագոյն առաջատար ճյու-թին—ժողովրդական տնտեսութեան կարևորագոյն առաջատար ճյու-ղերում այն հաշվով, վորպեսզի հետագայում տարիֆային ռեֆորմը տարածվի և ժողովրդական տնտեսութեան մնացող ճյուղերի վրա:

Այն ձեռնարկներում, ուր տարիֆային ռեֆորմը կանցկացվի, պետք է մտցվի համապատասխան միութեան կենտկոմի սահմանած նոր տարիֆային ցանցը:

Տարիֆային նոր ցանց մտցնելը պետք է ուղեկցվի 1-ին կարգի 2 դրույքների սահմանումով. մեկը—գործավարձայինների (սելեկիկ) իսկ մյուսը—ժամանակավարձայինների (պավրեմյոնշիկ) համար և այդ դեպքում գործավարձայինների դրույքը պետք է բարձր լինի ժամա-նակավարձայինների դրույքից:

Բացի դրանից, բոլոր ձեռնարկներում, անկախ նրանից, թե տա-րիֆային ռեֆորմը անց է կացրվում թե վոչ, աշխատավարձը պետք է վերակառուցել և վերակառուցելու ձևերն ու միջոցները պետք է ձևով ու կոնկրետ նախատեսված լինեն կողպայմանագրերով և հիմնականում հանգեն հետևյալին:

Պետք է վորոշել, թե ինչ ժամկետին, ինչ թվով և ինչ բանվոր-ների վարչութեւնը պարտավոր է անց կացնել ուղղակի, անհատա-կան և անասանան գործավարձի վրա: Առանձնապես պետք է հիշատա-կել աշակերտներին գործավարձային աշխատանքների թույլ ստիլը և նրանց վարձատրութեւնը:

Այն աշակերտները, վորոնք աշխատում են գործավարձայինների հետ, պետք է իրենց ստորիֆային ցանցի վրա նույն տոկոսաձագ հաճախորդությունը ստանան, վորքան վոր գործավարձայինն է ստանում: Այն աշակերտները, վորոնք ինքնուրույն կերպով աշխատում են վարձով գործի վրա, ստանում են միևնույն գործավարձային գնահատությունը, ինչպես ստանում են հասակավոր բանվորները, կրճատ բանվորական որվա համար լրացուցիչ վճար ստանալով:

Անսահման գործարքայութեան արժատուութեան հետ միասին, վորպես աշխատանքի վարձատրութեան հիմնական ձև, անհրաժեշտ է մտցնել և աշխատանքի վարձատրութեան և ուրիշ լրացուցիչ ձևեր (պրոգրեսիվ, պրեմիալի և այլն), այդ դեպքում՝ ապա հավելով անպայման պահով նախատեսված աշխատանքի արտադրողականութեան անձուր և ինքնարժեքի իջեցումը:

Պրոգրեսիվ-աճող գնահատությունների բարձրացումը պետք է մտցրվի սահմանված արտադրանքի նորմայից դուրս ավել աշխատանքի համար, բայց վոչ պակաս փաստորեն միջին աշխատավարձից:

Աշխատավարձի մեջ հավասարանքի ձևերից մեկն էլ հանդիսանում է պարապուրդի (պրատույ) ժամանակի համար միջին աշխատավարձով վճարելը: Նման վճարումը նշանակում է, վոր վոչ գործելու ժամանակն էլ վճարվում է նույնպես, ինչպես գործի ժամանակ, իսկ մի քանի դեպքերում, վոչ-գործն ավելի բարձր է գնահատվում, քան թե գործը:

Միաժամանակ, ճիշտ չե նույնպես և խոտանքի (բրակ) համար լիովին վճարելը (յեթե խոտանքը պատահել է վոչ բանվորի հանցանքով), քանի վոր նման դեպքում վճարի չափի և արտադրանքի վորակի մեջ կապակցութեան չկա և լավորակ և վատորակ (խոտանք) ապրանքը վճարվում է միանման գնահատությամբ:

1932 թվի կուլայականագրերը պետք է վերջ տան հավասարանքի այդ ձևերին, բանվորական մաստաներին մոբիլիզացիայի յենթարկելով խոտանքի և պարապուրդների դեմ պայքարելու, ստեղծելով բանվորների նյութական շահագրգռվածութեան և անտեսավորների՝ կողմից պարապուրդներն ու խոտանքը վերացնելու համար:

Հավասարանքի նման ձևերի հետ պայքարելու հրաշալի սրինակ ավին կրամոտուլությունի գործարանի հարվածային բանվորները, վորոնք մի կեջով դիմել են խորհրդային Միութեան բանվորներին, վորի մեջ առաջարկում են.

1. Նյութական պատասխանատվությունը դնել վարչական-տեխ-

նիկական այն աշխատավարձերի վրա, վորոնց հանցանքով առաջանում է խոտանքն ու պարապուրդը:

2. Խոտանած գործի համար սահմանել իջեցրած գնահատում (մինչև ստորիֆային գրույքի յերկու-յերրորդականը):

3. Պարապուրդի ժամանակ պարապ մնացող բանվորներին անցկացնել ուրիշ աշխատանքի՝ նրանց միջին աշխատավարձով, իսկ այնպիսի դեպքերում, յերբ բանվորը չի գրազված ուրիշ աշխատանքով, նրա պարապուրդ ժամանակը վճարվում է ստորիֆային գրույքի 50 տոկոսով:

Կարմիր սրտիկությունների հարվածայինների այդ նախաձեռնությունը պետք է յաւրացվի ու մտցրվի նոր պայմանագրերի մեջ:

Արտադրանքի նորմաների վերանայումը պետք է տարվի պլանային կարգով՝ մի ամբողջ տարվա ընթացքում՝ ինչ չափով վոր կանցկացվեն տեխնորմացումը, մեխանիզացիան և ուրիշ կազմակերպչական խնդիրները, վորոնք նպաստում են աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը: Արտադրանքի վոչ ճիշտ նորմաները պետք է վերանայվին 1932 թվի մայիսի 1-ից վոչ ուշ:

Արտադրանքի նորմաները սահմանում է վարչությունը բանվոր-հարվածայինի վրա՝ հաշվետուելով անխուսափելի տեխնիկական պարապուրդը, նորմալ խոտանքը և անհրաժեշտ հանգիստը:

Բացի դրանից, վարչությունը պետք է նորմայի լրացման համար աշխատանքների մեխոդների տեխնիկական հրահանգումն կազմակերպի:

Սահմանված նորմաներն ամրապնդվում են մի տարով և ժամանակից առաջ կարող են փոփոխման յենթարկվել տեխնիկական կամ կազմակերպչական միջոցառումների անցկացնելու կամ թե նորման սահմանելու ժամանակ թույլ տրված սխալի դեպքում: Անհրաժեշտ է նմանապես վորոշել, թե ինչ աշխատանքներ, ինչ ժամանակամիջոցին և ինչ միջոցներով պետք է ընդգրկվին տեխնիկական նորմայացումով:

Կուլայականագրերում պետք է ճշտվի սահմանել, թե վորոնք են հանդիսանում առաջատար արեֆեսիաները (վորոնք վճարվում են նախաձեռնութեան ունեն արդիֆինալանի կատարման մեջ) և այդ արեֆեսիաների բարձր վորակի բանվորների համար սահմանել ավելի բարձր աշխատավարձ (գրույքի բարձրացում մի քանի տոկոս, գնահատումների բարձրացում):

Այն աշակերտների, համար, վորոնք աշխատում են տաք ցեխերում ծանր ու վնասակար աշխատանքներում՝ սահմանվում է բարձրացրած (10. ից մինչև 25 տոկոս) աշխատավարձ:

Այն բանադրանքի համար, վորոնք աշխատում են ժամանակավոր ձով, ապահոված ավել զատումի փոխարեն պետք է սահմանվեն պրեմիաներ՝ աշխատանքի արագութեան և վորակի համար:

Ինժեներա-տեխնիկական աշխատավորների համար պետք է սահմանվեն տարիֆային դրույքների փոխարեն—ըստ պաշտոնների ուժիկների՝ մաքսիմումի և մինիմումի սահմաններում: Իսկ ցեխերի ինժեներա-տեխնիկական աշխատավորների ուժիկը վորոշում է ցեխի պետք:

Բացի ըստ պաշտոնների ուժիկներից, ինժեներա-տեխնիկական աշխատավորների համար պետք է սահմանվեն պրեմիաներ՝ թվական, վորակական և ինքնարժեքի պլանային առաջադրութեանները կատարելու և գերակատարելու համար, և այդ դեպքում պրեմիան տրվում է տան մի աշխատավորին առանձին՝ նրա անմիջական աշխատանքի արդյունքների համաձայն:

Հենց այդ ձևով էլ պետք է վերակառուցվի ծառայողների ստորին սպասարկող անձնակազմի աշխատավորները, և այդ դեպքում հատկապես պետք է մատնանշվեն զբառնայական-հաշվետարական աշխատավորների այն կատեգորիաները, վորոնք յենթակա են ուղղակի գործարքային տեղափոխելու:

Անհրաժեշտ և կողպամանագրում կապ ստեղծել աշխատավորների չափի և աշխատանքի վորակի միջև, մասնավորապես, պետք է դանազան գնահատումներ անել վորակի տարբերութեաններին համար (ըստ տեսակների):

Աշխատավորների վերակառուցման ժամանակ անհրաժեշտ է հատուկ լուրջ ուշադրութեան դարձնել այն բանի վրա, վորպեսզի աշխատավորների բարձրացումը վոչ մի պայմանով մեխանիքներին, անդիմացրաց չկատարվի, այլ սերտորեն կապակցված լինի աշխատանքի արտադրողականութեան աճման հետ և բանվորների մեջ հետաքրքրութեան առաջ բերի՝ իր վերակառուցման բարձրացնելու համար:

Կողպամանագրերը պետք է նախատեսեն, վոր թույլ չտրվի աշխատավորների սահմանված ֆոնդի ավելորդ ծախսումը:

V. ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄԸ

Կողպամանագրերի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում նմանապես՝ պայքար բանվորների կուլտուր-կենցաղային պայմանների հետագա բարելավման համար. «խորհրդային բանվորը պահանջում է ապահովել իր բոլոր նյութական և կուլտուրական պահանջները, և մենք պարտավոր ենք կատարել նրա այդ պահանջները» (Ստալին)

ները, և մենք պարտավոր ենք կատարել նրա այդ պահանջը» (Ստալին)

Դրան համապատասխան, կողպամանագրերում անհրաժեշտ է նախատեսել բնակարանային և կուլտուր-կենցաղային շինարարութեան (ակումբներ, մանկամուկներ, մանկապարտեզներ և այլն) հետագա ընդարձակում՝ արդֆինպլանով բաց թողնելով միջոցների համապատասխան:

Կողպամանագրերում պետք է նույնպես նախատեսվի կառուցվող տներում նոր բնակատարածութեան նախապես բաշխումը նրա համար, վորպեսզի ապագա բնակիչները գրավվեն հասարակական հրապարակային մեջ՝ տան կառուցումն իր ժամանակին ավարտելու համար:

Կողպամանագրերում նմանապես պետք է վորոշվեն վարչութեան պարտավորութեանները (ուղեգիրներ գնել պարգևատրման ֆոնդից) հանգստյան տներն ու սանատորիաներ պարգևատրված հարվածայիններին ուղարկելու, վորոնք կատարել ու գերակատարել են պլանային առաջադրութեաններն և կարիք են զգում հանգստանալու և բժշկվելու:

Կողպամանագրային կապանիայի ընթացքում բանվորական մասսաներն պետք է մոբիլիզացիայի յենթարկվեն՝ պայքարելու կոռուպցիայի և բանվորական մատակարարման ամբողջ աշխատանքները բարելավելու համար:

Կողպամանագրերում պետք է նախատեսվեն կողմերի կոնկրետ պարտավորութեանները՝ բանվորական մատակարարումն բարելավելու և բանվորների ընտանիքներին հասարակական անդով ընդգրկելը լայնացնելու (փակ բաշխիչների, ինքնավթերումների, ճաշարանների, բուֆետների կազմակերպում, քաղաքամերձ տնտեսութեանների, ֆերմաների, կերակրող կայանների շինարարութեան, բանվորական հսկողութեանը կողպեցիայի աշխատանքների վրա և այլն):

Հիմնարկներում բանվորական մատակարարման կազմակերպումը պետք է անց կացրվի հետևյալ լոգունով—«Լավագույն կերպով արդֆինպլանի կատարման համար—լավագույն մատակարարում»:

Արդֆինպլանով նախատեսված՝ աշխատանքի պաշտպանութեան և պայմանների առողջացման համար հատկացումները պետք է ոգտագործվեն բացառապես իրենց իսկական նպատակին՝ լրիվ և մեծագույն եֆֆեկտիվութեամբ:

Կողպամանագրում պետք է սահմանվի սպեցհագուստի տալու, սպեցհորձելու և պահելու կարգը (նորմաներն ու ժամկետները վորոշված են Երենքով): Պետք է բանվորական աշխուրջ հսկողութեան նշանակել սպեցհագուստի իր ժամանակին ու կանոնավոր տալուն և

պարտադիր դրամական հատուցմանը՝ խակական սպեցհազարան. հտալու կամ ուշացնելու դեպքում:

Կոլպայմանագրերում պետք է նախատեսվեն լրացուցիչ 3 որվա արձակուրդ բոլոր այն աշխատավորներին, վերոնք ավյալ հիմնարկությունում մինչև 1932 թ. հոկտեմբերի 1-ն անընդհատ աշխատել են 2 տարի կամ ավելի:

Կոլպայմանագրերում նմանապես պետք է նախատեսել ձեռնարկներում սանմինիմում անց կացնելուն՝ համաձայն Խորհրդային Միության Ժողկոմիսիոնի վորոշման:

Կոլպայմանագրերի սահմանված կուլտուր-կենցաղային սպասարկման, բանվորական մատակարարման և աշխատանքի պայմաններն առողջացնելու պարտավորությունները պետք է սահմանվեն ճշտիվ և կոնկրետ օբյեկտներ, կատարման ժամկետներ և անձինք, վերոնք պատասխանատու են կատարման համար:

VI. ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կուսակցության և կառավարության ղեկավարները զործնակա՞նորեն իրականացնելու նպատակով, կոլպայմանագրերում պետք է առանձնապես նախատեսվեն այն կոնկրետ միջոցառումները, վորոնք նպաստում են մասնագետների վորակավորման բարձրացմանը (հեռակա և մուտազա ուսուցում, եքսկուրսիաներ, զբոսաշրջաններ և այլն), մասնագետների կանոնավոր օգտագործմանը և այլն:

Պետք է նմանապես նախատեսվեն ինժեներատեխնիկական այն աշխատավորներին, վորոնք աշխատում են ցեխերում վնասակար պայմաններում, հավասարեցնել բանվորների հիմնական կադրերին՝ արձակուրդների տեղումնության, սպեցհազարանի ու չեղոքացնող իրերի նորմոյի վերաբերմամբ:

Կոլպայմանագրերում պետք է վարչության պատավորություններ սահմանել՝ ինժեներատեխնիկական աշխատավորների համար ճաշարաններ կազմակերպելու համար:

Նմանապես պետք է պարտավորություններ նախատեսվեն ինժեներատեխնիկական աշխատավորներից կարիքավորների համար նոր տներում բնակատարածություն տրամադրելու համար:

Կոլպայմանագրերում պետք է սահմանվեն կողմերի պարտավորությունները՝ օտարազգի մասնագետներին ըստ իրենց վորակավորման կանոնավոր օգտագործելու համար՝ նրանց համար աշխատանքի

լարեկարգ պայմաներ ստեղծելու, նրանց մեջ կուլքական աշխատանքներ ծավալելու և համապատկենցաղային սպասարկումը ապահովելու համար:

VII. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Կոլպայմանագրերում պետք է նմանապես նախատեսվեն այն առավելությունները՝ վորը—ուրիշ համահավասար պայմաններում—տրվում է պրոֆմիության անդամներին:

Գործի վրա են մնում՝ ձեռնարկը ավելորդ բանուժից ազատելու և ուրիշ աշխատանքների տեղափոխելու ժամանակ:

Բարձր վորակի աշխատանքի են առաջ քաշվում:

Դպրցանքում, դասընթացներում, խմբակներում և այլն ընդունվում:

Հիմնարկի տներում առաջին հերթին են բնակատարածություն ստանում:

Միության անդամների յերեխաներին դպրոցներում, մանկահրապարակներում, պարտեզներում ու մյուսներին առաջին հերթին են ընդունում:

Հանգստյան տներ, սանատորիաներ և կուրորտներ առաջին հերթին են ուղարկվում:

VIII. ԿՈԼՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՅՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Իրացման ստուգման տնտեսական—քաղաքական խաշոր նշանակության հետ կապակցված—կոլպայմանագրերում պետք է պարտավորություններ նախատեսվեն սխտեմատիկաբար, և բացի դրանից յերեք ամիսը մի անգամ կոլպայմանագրերի իրացման մասսայական ստուգում կատարել:

Միաժամանակ, պետք է կողմերի պատասխանատվությունը նախատեսել՝ կոլպայմանագրերը չկատարելու համար:

IX. ԲՈԼՇԵՎԻԿՐԵՆ ԱՆՑԿԱՅՆԵԼ 1932 ԹՎԻ ԿՈԼՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Կոլպայմանագրային կամպանիայի տնտեսական—քաղաքական կարևորագույն նշանակությունը պահանջում է կոմյերտական, պրոֆմիությանական և տնտեսական կազմակերպությունների բոլոր օւժերի մեքիլիզացիա՝ այդ կամպանիան բալեիկորեն անցկացնելու և իր ժամանակին ավարտելու համար: Անհրաժեշտ է կոլպայմանագրերի յերկկողմանի պարտավորությունների քննություն

և մշակման ժամանակ բոլոր բանվորներին, բանվորուհիներին, ինժ.-տեխնիկական աշխատավորների ու բանվոր յերիտասարդության 100 տոկոսային մասնակցութեանը ապահովել:

Սույն կալալայմանադրային կամաքանիան պետք է անց կացնել վճռական պայքար մղելով աշ—«ձախիկ» թեքումների ու ջախջախված գրուպովչինայի ու ատամանչինայի ու հակահեղափոխական տրոցկիզմի մնացորդների դեմ: Կուլակային տարրերը, վորոնք ներս են սողոսկել մեր ձեռնարկներում ու ավերիչ աշխատանքներ են տանում խորհրդային իշխանութեան դեմ, կալալայմանադրային կամալանիայի ընթացքում մեր անման դժվարութեանները կարող են ոգտագործել հոգուտ իրենց հակահեղափոխական նպատակներով, նման բոլոր տարրերին պետք է ջախջախիչ հակահարված տալ:

Կուսակցական, պրոֆեսիոնալ և կոմյերիտական կազմակերպութեանները սույն կալալայմանադրային կամալանիայում, սպարտաուիդմի ամեն տեսակ յերևույթների, հակահեղափոխական տրոցկիզմի և փտած լիբերալիզմի դեմ պայքարելով, պետք է պրոլետարական մասսաներին համալսմբեն Լենինի կուսակցութեան շուրջը և մոբիլիզացիայի յենթարկեն ամբողջ բանվոր դասակարգը՝ կուսակցութեան գլխավոր գիծն անց կացնելու, Լենինյան կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինի պատմական վեց ցուցմունքներն ամբողջովին կյանքի մեջ իրականացնելու և սոցիալիստական շինարարութեան հետագա ծավալման և դրա հիման վրա բանվարական մասսաների նյութական և կուլտուր-կենցաղային բարորութեան վերելքի համար:

